



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99

72-29



Ի հոյ կարգի մեջ մնալու
19 NOV 2011

891.99 ՎՍՀՍԸ ԹՄԻՍՐԲԵԳԵՍԸ
48

Թ-29

ԲԱՆԱՍՏԵՂ ԾՌԻԹԻԻ ՆՆԵՐ



80932
10001

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Վրաց Հրատ. Ընկ. || Типог. Груз. Изд. Т-во.
1903



ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՍ.

„Nichts ist dauernd als der wechsal: nichts beständig als der Tod. Icolet Schlag des Herz ns schlägt uns eine Wunde, und die heben wäre ein ewiges Verblüten, wenn nicht die Dichlkünst wäre. Sie gewährt uns, wac uns die Natur versagt: eine goldens Zeit, die nicht rostet, ein'n Frühling der nicht abblüht, wolkenloses Glück und ewige Iugend.,

B ö r n e.

Дозволено цензурою. Тифлисъ, 19-го апрѣля 1903 года

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 Ի ՅԻՇԱՏԱԿ
 ԻՍՏԻՂԱԲԵՐ
 ՍԵՐՈՐԵՅԱՆ-ԻՆՃԻԿՅԱՆԻ
 Ի 23-Ն ՀՈՒՆՎԱՐԻ 1929 Թ. ԹԻՖԼԻՍ

Եթէ, յիրաւի, կայ մի բան, որ այս պողոտայական գծուձ կեանքի՝ տաղտկալի և յաճախ յուսահատական ու զգրուելի պատկերներն, դոնէ առ վայր մի մտնալ է տալիս մեզ և մեր յոգնած աչերին մի այլ, երջանիկ կեանքի պատկերներ նկարու՞մ՝ այդ բանաստեղծութիւնն է:

Բանաստեղծութեան թեթևասոյր թեկերով մենք սրանու՞մ ենք այն կախարդական աշխարհն, ուր յաւերժական մշտածիժազ դարուն է համայն, ուր երկինքն է միշտ կապոյտ և օդն անուշաբոյր, ուր թռչնիկներն քաղցրաձայն յօրինու՞մ են համերգներ, իսկ վտակներն

կարկաջիւն գլորում են ջինջ ալիներ և ուր փթթում են հրաշազան Լոտոսի վառ ծաղիկներն...

Մենք սրանում ենք աւելի հեռու, Եղեմական դրախտի ամենաչքնաղ, ամենաթովիչ վայրերը, ընտելեան հրաշալիքները—երփներանդ ծաղիկների ծոցում հանդչելու, ուր բոսորաներկ արշալուսին չքնաղ յաւէրժահարաներն՝ զեփիւռի քնքոյչ մեղեդիների աղբեցութեամբ սթափուելով քնից, ամբրոսական ծաղիկների գոհարազարդ թերթերի անուշահամ հիւթերից պատրաստում են աստուածների անմահական նեկտարն...

Մենք ճախրում ենք եթերային ավիանի անհունութեան միջով, թռչում տիեզերքի լուսատուների բոցավառ խմբերի վրայով, լողում «ծիր կաթնի» մէջ, սլանում աւելի վեր, հեռու, շատ հեռու...

Բայց... դուցէ այդպիսի թռիչքներ յատուկ են միայն երիտասարդական հասակին... ես այդ չգիտեմ, սակայն երջանիկ է այն հասակն, որ ընդունակ է դէպի վեր ձգտել...

Սիրելի ընթերցող, եթէ դու ծեր ես, կամ արդէն անցել ես այն հասակն, երբ մարդու սիրտն յուզում են այնպիսի զգացմունքներ, որպիսին դու նկարագրուած կը գտնես այստեղ՝ անշուշտ չես վրդովուիլ, որ բանաստեղծն յիշողութեանդ մէջ վերարտադրում է՝ երջանիկ անցեալիդ յիշատակներն... Իսկ եթէ դու երիտասարդ ես և վառ է քո մէջ ոսկի յոյսերի, փայլուն խղէալների քաղցրիկ անուրջներն, եթէ դեռ չէ նսեմացել քո մէջ՝ ազնիւ բղձերի, վեհ ձգտումների յուսադրող ձայնը և լի է սիրտդ սրբազան սիրով՝ քոնն է այս գիրքը:

Եթէ նա քեզ դուր չի գայ, անշուշտ չես բարկանալ: Գիտես, որ այն նուիրական զգացմունքներն, որոնք բորբոքում են մեր սիրտն, այն վեհ զաղափարներն, ո-

րոնք յաճախ դալիս են մեզ այցելութեան ու մեզ շրջապատող անելանելի խաւարի մէջ լուսոյ շիթեր արձակում, երբ աշխատում ենք մենք թղթին յանձնել, մանաւանդ երբ ուզում ենք նոցա չափածոյ տարազով արտայայտել՝ կորցնում են իրանց գեղեցկութեան ամենահրապուրիչ մասն և նմանում են լոկ այլանդակ կամալքի:

Ամիտիում եմ խօսքս բանաստեղծի բառերով, որ ասում է. «Գրականութիւնը ցոյք մըն է, տկար ցոյք, տմոյն ցոյք այն ներքին պայծառութեան, որ կը վառի մեր գանկի տակ, որ մեր հոգոյն մէջ կը վառի»:

Հեղինակ. ...

„ՍԻՐՈՅ ՆՈՒԱԳՆԵՐ“

(1898 թ.)



ՔԵՉ ԵՄ ՆՈՒԻՐՈՒՄ

(ՆՈՒՐ ՕՐ. Ս. Ս.)

Քեզ եմ նուիրում այս երեխայրիք՝
Հոգւոյս անուրջներն, տենչանք ու լալիք,
Ժպիտ ու ծիծաղ, ոսկեվառ յոյսեր,
Անքուն գիշերի շերժ արտասուքներ.

Որովհետև դ՛նւ չնչեցիր իմ մէջ
Սրբազան երգի գողարիկ ելեւէջ.
Քեզ եմ նուիրում, ընդունիր նոցա—
Սիրազեզ սրտիցս՝ զերթ չնչին ընծայ:

Երբոր շատ օրեր, տարիներ անցնեն,
Ես էլ սև հողին մի անկիւն հանգչեմ,
Կիացիր, սիրելիս, որ դ՛նւ յաւիտեան՝
Երգերիս շնորհիւ՝ պիտ մնաս կենդան:

1898 մայիս 14.
Մոզգոկ.

5-5 (4) 12 c.



I.

Ինչպէս թիթեռ՝ դու անհոգ ես,
 Որպէս ծաղիկ՝ գեղեցիկ.
 Կը ցանկայի մնայիր այդպէս՝
 Միշտ անբիծ ու երջանիկ.


Բայց, աւանդ, այդ շատ չի տևի.
 Անթիւ վշտեր ու հոգսեր
 Կ'լափեն կարմիրն քո այտի—
 Երբ կիմանաս ի՞նչ է սէր:

Ա. յուհեան անհոգ-ուրախ
 Չես թռչկոտիլ զերթ թիթեռ,
 Ա. յուհեան, մանկիկ չքնաղ,
 Կը պաշարեն քեզ վշտեր:

3/7 4-4/4-3 (4)¹² abab



II.



Փոքրիկ մանկան սեղմած ամուր
 Չնաչխարհիկ քո կրծքին,
 Բիւր, անհամար քաղցրիկ համբոյր
 Գրոշմում ես դու այտերին.

Իսկ ես կանգնած նայում եմ լուռ
 Մտածում եմ ախամայ,—
 Ափսոս գգուանք անցնում է զուր,
 Ձուր է... նա չի հասկանայ...

4-4/4-3 (4) 8 abab



III.

Մտախոհ ու լուռ, նայում եմ արտուր
 Քո չնաչխարհիկ կապոյտ աչերիդ,
 Արանդ փայլում է սիրոյ շինջ աղբւր—
 Յստակ ու վճիտ, ինչպէս մարգարիտ:

Ես կը ցանկայի, հոգեանկ, սիրավառ
 Գողարիկ աչերիդ յաւիտեան նայել,
 Ծծել վարդագոյն շուրթիցդ նեկտար,
 Հոլանի կրծքիդ գլուխ հանդէպնել...

5-5 (4) 8 abab



IV.

Ինչպէս ուղևորն՝ շոգից վաստակած,
 Դադար է առնում թաւուտ անտառում,
 Ինչպէս սոսկալի փոթորիկց փրկուած—
 Հանգչում են մարդիկ խաղաղ ծովափում,

Այդպէս էլ և ես—խռովայոյց կեանքի
 Կոհակների դէմ կռուելով անվերջ,
 Կուզէի հանգիստ առնել, իմ հոգի,
 Քո շուշանագեղ, անբիծ գրկիդ մէջ:

5-5, (4) 8 abab



V.

Երբոր երկնագոյն գողարիկ աչուներդ
 Դարձնում ես երբեմն ինձ վրայ մեղմիկ
 Ու գերերկրային մի անբիծ ժըպիտ
 Պարգևում ես ինձ դ՛ն, չքնաղ մանկիկ,


Գիտե՛ս, որպիսի անհուն բերկրութեամբ
 Բաբախում է իմ սիրտս վշտահար,
 Բայց գիտե՛ս արդեօք ի՞նչպիսի մտքեր
 Այլեկոծում են հոգիս անդադար:

Ինձ թւում է, որ մեզ համար երբէք
 Չը պիտի ծաղկէ սիրոյ վառ գարուն
 Ու նորաբողբոջ մեր սիրոյ կոկոնն
 Պիտի թառամէ դեռ առաւօտուն.

5-5 (4) 12 xaxa
20

Ինձ թւում է, որ մեզ ամենեւին
Ձը պիտի ժպտայ բաղդն յաւիտեան,
Երբէք, սիրելիս, չը պիտի հասնենք
Մենք երջանկութեան ցանկալի կայեան.

Ինձ թւում է, որ... բայց ինչո՞ւ, ինչո՞ւ
Վրդովում են ինձ այս տխուր մտքեր...
Օ անգին մանկիկ, երբ դու նայում ես
Նորա ցըւում են՝ ինչպէս անուրջներ...



VI.

Նստած էիր դու պարտիզում տխուր,
Ինչպէս սգաւոր չքնաղ դիցունհի,
Մտքով, չգիտեմ, սրացած էիր ո՞ւր,
Արդեօք ո՞ր անկիւն մեր հողագնդի.

Գեղեցիկ գլուխդ խոնարհած կրծքիդ,
Նայում էիր դու ցողասուն գետնին
Եւ մի սրտառուչ, թախծալից ժպիտ
Յարմարում էր քո վշտակիր դէմքին:

Անցայ ես մօտովդ, նայեցի վերադ,
Յասմիկի փնջիկ, կարծեմ, տուի քեզ,
Տեսայ դարկահար այտերդ ու ճակատ—
Անմեկին սառսուռ անցաւ ողջ մարմնէս:

Երբոր հայեացքդ դարձրիր ինձ վերայ,
Ես քո կապուտակ ցորեն աչերում
Կարդացի սիրոյ գողտրիկ պօէմա,—
Իսկոյն հասկացայ ինչո՞ւ ես տրտում...
5-5 416 abab



VII.

Երբ որ դարուն եկաւ մեզ մօտ,
Գեղածիծաղ վառ դարուն,
Բիւր ծաղիկներ անուշահոտ
Փրթթեցին մեր պարտիզում:

Եւ կարմրաշուրթ վարդն քնքշիկ,
Եւ երկնագոյն մանուշակ,
Եւ նունուֆար, շուշան, յասմիկ,
Եւ թ'անուշաբոյր մելսակ:

Բայց ինձ համար նոքա այլ ևս
Չունին այժմ բնաւ գին,
Որովհետեւ գտել եմ ես
Մի այլ ծաղիկ հրաշածին:

Այն օրուանից երբ քեզ տեսայ,
Քեզ, ո՛վ հրեշտակ, աննման,
Ինձ համար դու, ո՛հ հաւատան,
Վերդ ես, մելսակ և շուշան:

8/7 (4) 16 սեւ



VIII.

Հեռու, կապուտակ եթերում
Փայլում են անթիւ աստղեր,
Ցոլում են նոքա, առկայծում,
Ինչպէս կանթեղ մութ գիշեր:

Նոքա սփռում են մի խաղաղ,
Հոգեղուարճ չքնաղ լոյս,
Բայց մեր հոգուն նոքա, աւանդ,
Չեն ներշնչում ո՛չ մի յոյս:

Բայց ես գիտեմ մի զոյգ աստղիկ,
Գերերկրային մի յուսով—
Այդ քո աչերն են գեղեցիկ,
Որ սիրտս լցնում են յուսով:

Եւ երբ տեսնում եմ ես նոցա—
Այդ աստղերն հրաբորբոք,
Աղօթում եմ ես ակամայ
Նոցա առաջ ծնկաչոք:

8/7 (4-4/4-3) (4) 16 սեւ



IX.

Գեղեցիկ ես դու, աննման—
 Ինչպէս գարնան արշալոյս,
 Դու քնքոյշ ես իբրև շուշան,
 Որպէս ծաղիկ դեռաբոյս:

Քո աչուներդ, անգին մանկիկ,
 Յիշեցնում են ինձ յաճախ՝
 Եւ մայիսեան պայծառ երկինք,
 Եւ ովկիան մի խաղաղ.

Իսկ շրթունքներդ կարմրաթոյր
 Կոկոն վարդի են նման,
 Կը ցանկայի քաղել համբոյր
 Ես նոցանից գէթ անգամ:

Սակայն, հոգիս, շատ անգուլթ ես
 Ու չեմ խղճում ոչ ոքին,
 Բայց մինչև այժմ, միթէ չգիտես—
 Պէտք է զիջել պօէտին...

8/7 (4) 16 alab



X.

Դու ինձ հարցնում ես զարմացած՝
 Թէ ինչո՞ւ եմ քեզ սիրում,
 Ինչո՞ւ երբեմն ես յանկարծ—
 Եւ տխրում եմ և ժպտում:

Ինչո՞ւ ես միշտ քեզ դիպչելիս—
 Դողում եմ ամբողջ մարմնով.
 Ինչո՞ւ ձեռներդ համբուրելիս—
 Թրջում եմ ես արցունքով:

Օ՛ր, միամիտ, մանկիկ անմիտ,
 Իրաւ հրեշտակի ես նման.
 Մի՞թէ չգիտես, որ քո ժպիտ
 Կեանք է տալիս անսահման...

(8/7) (4-4/4-3) (4) 12 alab



XI.

Ամեն անգամ երբ կապուտակ
Աչերիդ մէջ եմ նայում,
Ինձ թւում է ծով անյատակ,
Ծով եմ տեսնում ես անհուն.

Որ փրփրալից, լեռնանման
Ալիքներով վիթխարի՝
Մահ է սպառնում ինձ անպայման,
Մի մահ ահեղ, սոսկալի:

Եւ սարսափած ես, սիրելիս,
Քո վերայ եմ յարձակում:
Սեղմում գլուխդ ես իմ կրճքիս,
Աչերդ անվերջ համբուրում:

3/7 ④ 12 abab



XII.

Ամեն անգամ, երբ ինձ վերայ
Դարձնում ես դու ըս աչեր,
Սիրտս սկսում է ահամայ
Կրճքիս միջին թըփրտել.

Ամեն անգամ, երբ վարդազոյն
Նրթունքներովդ աննման
Ժպտում ես ինձ՝ սիրտս անհուն
Ցաւ է զգում անսահման.

Բայց երբ, հոգե՞նկ, դու ահանջիս
Սիրոյ խօսքեր ես ասում,
Արցունքն պատում է աչքերիս,—
Սիրտս արին է ցայտում:..

3/7 ④ 12 abab



XIII.

Ախ, եկ հոգիս, եկ սրանանք
 Հեռու, հեռու այստեղից,
 Միայնութեան մէջ վարենք կեանք,
 Հեռու կոպիտ մարդկանցից:

Ընտրենք մեզ համար մի խաղաղ,
 Մի գեղեցիկ, անդորր տեղ.
 Ապրենք այնտեղ անհոգ, ուրախ
 Ու կեանք վարենք սիրազեղ:

Այնտեղ, հոգեակ, մեղի բնաւ
 Չեն վրդովիլի բիրտ մարդիկ.
 Կապրենք հանգիստ և առանց ցաւ...
 Դէհ, շուտ գնանք, իմ մանկիկ:

8/7 (4-4)/4-3 ④ 12 abab



XIV.

Դու խաբու՞մ ես, ինձ չես սիրում,
 Դու ժպտում ես աղամնյ.
 Քո երգումիդ չեմ հաւատում
 Ծիծաղում ես ինձ վերայ.

Դու կեղծու՞մ ես՝ երբ յաւիտեան
 Խոստանում ես ինձ սիրել,
 Երբ ասում ես՝ մինչ գերեզման
 Պատրաստ ես իմն լինել...

Ինձ չես սիրում... ասան, հոգիս,
 Որ չես սիրել դու երբէք.
 Ասան, որ քեզ տանջուած սրտիս
 Հաճելի է երգ ու վերք...

8/7 ④ 12 abab




XV.

Պու հարցնում ես՝ թե ի՞նչ անես,
 Որ հաւատամ ըս խօսքին.
 Ի՞նչպէս գրգուես, ի՞նչպէս յայտնես
 Կրակ ու բոց սէրդ ու ժգին,
 Որ իմ սրտից կասկած ու վիշտ
 Խլես հանես դու ընդմիշտ:

Ա՛խ, սիրելիս, ինձ հաւատան,
 Ես ինքս էլ չեմ հասկանում.
 Բայց թւում է, որ հէնց հիմա
 Կրկին խաբել ես ուզում...

8/7 (6+4) alabcc + 11.



XVI.

Ինչպէս ահռելի շանթերն ամպրոպեան
 ձեղքում են երկնից սևուկ վարադոյր
 Լուսաւորում են միայն մի վայրկեան
 Դժբաղդ ճամբորդի ուղին սևաթոյր.

Այդպէս էլ, հոգեակ, ըս կայծակնափայլ
 Շանթալից աչերդ երկնային լուսով,
 Յրում են հոգուս դժնդակ մռայլ,
 Ներշնչում են ինձ նոր կեանքի յուսով:

Բայց... անդին մանկիկ, սարսափում եմ ես.
 Վախեցնում է ինձ պատկերն բնութեան,
 Մթթէ դճւ ևս միայն մի վայրկեան
 Հոգւոյս խաւարն պիտի փարատես...

Բայց մթթէ չգիտես, որ այնուհետև
 Կրկին պիտ պատէ խաւար յարատև...

5-5 (4) x 3 + (2) n. n. o. c.



XVII.

Եթէ աչերդ ունայն յուսով
 Կամենային ինձ խաբել՝
 Կը ցանկայի թանձր խաւար
 Պատել նոցա անարգել.

Թէ շրթունքներդ վարդաթոյր,
 Որոնց համբոյր եմ տալիս,
 Մոռնային ինձ՝ կը ցանկայի
 Տեանել նոցա թուամելիս.

Իսկ թէ լեզուդ, որ ականջիս
 Նըշնջում է ինձի սէր
 Դաւաճանէր՝ կուզէի ես՝
 Բերնիդ միջին կարկամէր:

8/7 ④ 12 xaxa




XVIII.

Պիտեմ, որ ինձ դու չես սիրում,
 Ո՛վ, դու մանկիկ, հրաշագեղ.
 Ասն ինչո՞ւ ես ինձ խաբում
 Ու ժպտում ես ամեն տեղ:

Քո կապուտակ աչուներից
 Հանգիստ չկայ ինձ համար
 Եւ շանթահար նոցա կայծից՝
 Չարչարում եմ անդադար:

Սիրուն աղջիկ, գու՛թ ունեցիր
 Ու մի տանջիր ինձ այդպէս.
 Կամ աղաչանքս դու լսիր,
 Կամ մի ցոյց տուր քո երես:

8/7 ④ 12. abab



XIX.

Մէ՛խ, մի ասիլ թէ՛ չես կարող սիրել,
 Թէ սիրադ ուրիշն է արդէն գերել.
 Մի ասիր սիրոյդ դուռն երանաւէտ
 Փակուած պիտ մնայ ինձ համար յաւէտ:

Ո՛հ, խնդրում եմ քեզ, մի զրկիր դու ինձ
 Ունայն յոյսերի քաղցր ցնորքից.
 Հաւատն, հոգիս, լաւ է ես խարուեմ,
 Քան առանց սիրոյդ անվերջ տանջուեմ:

5-5 ④ 8 c.



XX.

Ո՛չ. մի յիշիր ինձ՝ ոչ արշալուսին
 Խնկարոյր դարնան,
 Եւ ոչ էլ դժգոյն, հէզ վերջալուսին
 Սդաւոր աշնան.

Ո՛չ. մի յիշիր ինձ՝ ոչ կեանքի՛ եռուն
 Ուրախ խնճոյքում
 Եւ ոչ էլ երբ դու թախծութեան անհուն
 Կ'լինիս ովկեանում...
 ...

Այլ երբ կը տեսնես խորտակուած համայն
 Քո ոսկի յոյսեր...

Ահն, այդ ժամին, խնդրում եմ միայն
 Յիշիր դու ինձ, սէր:

10/5 ④ 12 abab



XXI.

Ա՛խ, ո՛ւր էք արդեօք՝ պատկերներ զողորիկ
 Ուրախ անցեալի,
 Ոսկեզօծ աստղեր, կապուտակ երկինք
 Եւ համերգ առուի.

Ա՛խ, ո՛ւր էք արդեօք՝ երկնագոյն աչեր,
 Այտեր վարդաթոյր,
 Օ՛, ո՛ւր չքացաք՝ սիրոյ մրմունջներ,
 Սիրազեղ համբոյր...

Անցեալի չքնաղ վայրկեաններէց ինձ
 Իբրև յիշատակ
 Մնացել է միայն—անպատում կսկիծ
 Հոգուս աւերակ...

10/5 ① 12 abab



XXII.

Երբ, սիրելիս, կը գայ այն օրն օրհասական,
 Երբ ես աչերս կը փակեմ մինչ յաւիտեան
 Եւ երբ մարմինս կը պատի մահուան դալուկ
 Ու ցուրտ հողի մէջ կը դնեն ինձ կամացուկ—
 Զ'ինի թէ դու թափես արցունք...

Ո՛չ, սիրելիս, հարկաւոր չէ ցուրտ դիակին,
 Ո՛չ քո հառաչ, ո՛չ արցունքներդ ջերմազին,
 Շիրիմիս մէջ, հեռու քեզնից, ո՛հ հաւատոս
 Քո տանջանքներդ ամենեին ես չեմ դգայ...
 Զ'ինի թէ դու լաս իմ վերայ...

12/12/12/12/8 "4" ⑤ 10 aabbb



XXIII.

Ինչպէս պալատներն կիսակործան
Յիշեցնում են մեզ փառքը անցեալին,
Ինչպէս շիրիմի վերայ յուշարձանն
Մեր միտն է բերում այնտեղ հանգչողին,

Այդպէս էլ ահա այս դժգոյն տողերն
Ուր ամփոփուած է իմ սիրտս ու հողիս,
Օ՛ր, թո՛ղ յիշեցնեն, մանկիկ, քեզ իմ սէրն,
Բայց մի արտասուիկ նոցա կարգալիս:

Ես վաղուց կ'լինեմ շիրիմում պառկած,
Սև հողի տակին, հեռու քեզանից,
Իմ ոսկորներս հող կ'լինեն դարձած,
Զոր կանցնեն, աւանդ, քո վիշտ ու կսկիծ...

5-5. (4) 12 abab



ԲՆՈՒԹԵԱՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐ

Գ Ա Ր Ո Ւ Ն

I.



Քեղեցիկ դարուն, օ՛ չքնաղ դարուն,
Քո ծաղիկներիդ անոյշ բալասան—
Անհուն բերկրութիւն է ինձ պատճառում
Ու սիրաս լցնում սիրով անսահման:

Քնքոյշ զեփիւռի գողարիկ մեղեդիք
Յրում են հոգուս մռայլօտ յոյգեր—
Ու սոխակների անոյշ դայլայիկ՝
Օրօր են ասում... փակում եմ աչեր...

1898 մայիս 9.

5-5 ④ 8 abab



II.

Անցան ձմրան տըխուր օրեր,
 Անցան բուր ու փոթորիկ.
 Եկաւ գարունը կենսաբեր,
 Եկան օրեր գեղեցիկ:

Զարդարուեցան արտ, անդաստան
 Մաղիկներով երփներանգ,
 Երգեց սոխակն հրաշագան
 Սիրոյ վշտեր ու տանջանք:

Բայց իմ սրտիկս վշտալից,
 Աւանդ, չունի նա գարուն.
 Նորան պատել է մի կսկիծ,
 Մի անպատում վիշտ անհուն...

1898 մայիս 14.

8/7 ④ 12 abab



III.

Շուրջս գարուն է գեղեցիկ,
 Գեղածիծաղ վառ գարուն,
 Բայց իմ ներսս՝ բուր, փոթորիկ,
 Թանձր մուսլ է պատում:

Շուրջս գարուն է և յտակ
 ✓ Լուում է սոխակի երգ,—
 Միայն հոգիս է աւերակ,
 ✓ Ուր երգ չէ հնչում երբեք...

1898 յունիս 16.

8/7 8/7 44/(4-3) ④ 8 abab



Ա Շ Ո Ի Ն

I.

Ամպեր սևաթույր, ամպեր թախծալից
Պատում են երկնի կապուտակ կամար,
Յօղում են նոքա արուսար անբիծ,
Լալիս միայնակ, լալիս անդադար:

Սիրտս էլ քեզ նման, ո՞վ երկինք աչնան,
Դաժան յոյզերով պատած է բոլոր.
Նա էլ ցօղում է ամեն մի վայրկեան,
Բայց ո՞չ թէ արուսար՝ այլ արին բոսոր...

1897 հոկտ. 9.

5-5 (4) 8 abab



II.

Կանաչ տերեւներ դեղնում են, թօշնում...
Թափւում են գետին նոքա դալկացած,—
Մահն ամենուրեք աւեր է սփռում,
Օ՛, ի՛նչպէս չը լայ աշունն որբացած:

Կեանքիս օրերն էլ կորչում են անդարձ
Անհուն-անսահման տարածութեան մէջ,
Ա՛խ, նոքա չունին բնաւ վերադարձ—
Ահն թէ ի՛նչու լալիս եմ անվերջ...

1897 հոկտ. 11.

5-5 (4) 8

abab



III.

Ախ, ոչինչ չկայ այստեղ յարասն՝
 Ո՛չ վարդաժպիտ արշալուսի գեղ,
 Ո՛չ գունեղ ծաղկունք, ո՛չ կանաչ տերև
 Եւ ո՛չ ծիածանն եօթնարփեան աղեղ:

Քն էլ, սիրելիս, հուրն աչերիդ,
 Գիտեմ, պիտ մարի մի օր անկասկած՝
 Եւ այդ վարդաթոյր գեղեցիկ այսիդ,
 Պիտ թառի մահուան համբոյրն գեղնած...
 5-5 (4) 3 abab

1897 հոկտ. 31.



IV.

Կրկին միջապնտ, տխուր, մռայլոտ
 Եկան աշնային օրերն դաժան,
 Պատեցին երկինքն ամպերը թխպոտ,
 Իսկ սիրոս—վշտեր, յոյզեր անսահման...

Էլ չկան դարնան ծաղիկներն չքնաղ,
 Որ փթըթում էին պարաիզում սիրուն—
 Վարդ, մեխակ, շուշան թուռմել են աւնդ. *Platanus*
 Ամենքի գէմքին մահուան դեղնութիւն...

Եւ թռչնիկների ուրախ մեղեդին,—
 Ինչպէս Արարչին վերուղեալ օրհներգ, —
 Էլ չէ գեղգեղում վաղ արշալուսին.
 Լռել են վաղուց՝ խինդ, ծիծաղ ու երգ...

Երկինք է մըռայլ ու դժնատեսիլ,
 էլ չէ երևում կապուտակ կամար
 Ու կարեկցութեան արցունքի կաթիլ
 Յօղում են միայն ամպերն անհամար:

Անտառն մերկացած իր տերևներից,
 Ինչպէս սգաւոր նայում է տխուր,
 Ճնշում է սիրտս անպատում թախիժ
 Եւ ես կամացուկ արտասուում եմ լուռ...

Կրկին միջապստ, տխուր, մռայլստ
 Եկան աչնային օրերն դաժան,
 Պատեցին երկինքն ամպերը թխպոտ,
 Իսկ սիրտս—վշտեր, յոյզեր անսահման...

1898 սեպտ. 27.

5-5 (4) 24 abab



Չ Մ Ե Ռ

I.

Քիչեր է ձմրան: Երկինքից դաժան
 Թափւում են կամաց ձիւնի հատիկներ,
 Մոլեգնած քամին, ինչպէս մի դաղան՝
 Գոռում է ուժգին, բաղխում է դռներ...

Անձնատուր եղած դառն վշտերի
 Լսում եմ միայն քամու շառաչիւն.
 Մռայլ է հոգիս, սիրտս յուզմամբ լի,
 Ինչպէս գիշերուայ կատաղած բնութիւն...

1898 մարտ 8.

5-5 (4) 8 abab



II.

Թափւում է անդուլ ձիւնն երկնքից,
 Ծածկւում է երկիրն սպիտակ շղարշով,
 Անսահման մի վիշտ, անպատում թախիծ
 Լցւում է սիրտս մահուան երկիւղով:

Եւ ես սարսափով զգում եմ մի օր
 Իմ գլուխս էլ կ'պատէ նոյնպէս ճերմակ ձիւն,
 Կը մարեն իմ մէջ ըզձերս բոլոր
 Եւ ես կը հանգչեմ հողին մի անկիւն...

1897 հոկտ. 30.

5-5 (4) 8 abab




Գ Ի Շ Ե Ր

Գիշեր է անդօրր, մի խաղաղ գիշեր...
 Թանձր մշուշի նուրբ շղարշի տակ
 Վնած է հովիտ, քնած են լեռներ,
 Չէ փայլում աստղիկ, չէ երգում սոխակ.

Միայն վշտալով հոսում է աղբրիկ
 Ու մերթ վրդովում խորին լռութիւն,
 Չէ փչում դեփիւռ, չէ բուրում ծաղիկ—
 Հանգիստ է առնում խոնջած բնութիւն:

1897 նոյեմբ. 7.

5-5 (4) 8 abab



Ա Ս Տ Ղ Ե Ր

Այնտեղ, երկնքի անհուն բարձունքում
Առկայծում են յար ոսկեթոյր աստղեր,
Փայլում են նոքա, փայլում անդադրում,
Որպէս սիրազեղ վառվռուն անջեր:

Փայլում են նոքա՝ թէ գիշերն դարնան,
Երբոր զեփլուռ փրչում է մեղմիկ,
Երբ անուշութեամբ բուրում է շուշան,
Երբոր սոխակի լուում դայլայլիկ.
Բայց և փայլում են ձմրան գիշերով,
Երբ մռնչում է քամին կատաղած,
Երբ ծածկում է ամեն ինչ ձիւնով
Ու երբ ոռնում են գայլերն քաղցած:

Յոյում են նոքա՝ երբ սիրահարներն
Փարում են իրար ամուր սրտագին,
Երբ որ ծածկում են միմեանց այտերն
Նոքա համբոյրով ջերմ և կաթոգին:
Յոյում են նաև՝ երբոր բռնակալն
Մխում է դաշոյնն կուրծքը իւր զոհի,
Երբ ողողում է ամբողջ աշխարհն
Մարդկային արեան գետով ամեհի:

Փայլում են նոքա կապոյտ եթերում,
Այնպէս սիրայիր, այնպէս գրաւիչ,
Բայց նոքա երբէք մեզ չեն կարեկցում,
Մեր բիւր վշտերին չեն նոքա սփոփիչ:

Ահն թէ ինչո՞ւ ատում եմ ես ձեզ,
Ձեզ ոսկեճաճանչ գողարիկ կանթեղներ,
Թէև դուք փայլուն,—բայց անպէտք էք մեզ,
Ձէք կարող բուժել մեր անթիւ վերքեր...

1897 հոկտ. 10.

5-5

$$\textcircled{4} + \textcircled{8} + \frac{28}{\textcircled{8} + \textcircled{4} + \textcircled{4}} \text{ abab}$$

Գ Ե Տ Ի Ա Փ Ի Ն

Կանգնած եմ միայնակ ես գետի ափին
Նայում եմ տխուր նորա ալիքին.
Իսկ նորա կամաց հոսում են առաջ
Մերթ ծիծաղում են, մերթ հանում հառաչ:

Ո՞ւր էք դուք շտապում միշտ այդպէս արագ.
Արդեօք անսահման ծոփն կապուտակ.
Հանգչելու խաղաղ, հանգչելու ընդ միշտ,
Նորա յատակում թաղելն ձեր վիշտ.

Թէ հալածուած էք դուք բաղդից դաժան
Շտապում էք գտնել անբոյթ ապաստան,
Ճեպում էք հասնել ափն փրկարար,
Ուր կարենայէք դուք առնել դադար.

Թէ բնութեան գաղտնի ոյժն զօրաւոր
Մղում է առաջ ձեզ ամենայն օր,
Որ չէք կարենում անգամ մի վայրկեան
Կանգնել և ինձի տալ մի պատասխան...

Բայց նորա լուռ-մունջ հոսում են առաջ,
Մերթ ծիծաղում են, մերթ հանում հառաչ.
Գնճում են, գնճում հանելով փրբիուր ...
Ու ես պատասխան սպասում եմ ի դուր...

1897 նոյեմբ. 10.

5-5 Կժժ Ե.



Մ Ր Մ Ո Ւ Ն Ջ Ն Ե Ր



Կ Ե Ա Ն Ք Ի Ս Ն Պ Ա Տ Ա Կ

Ես պիտի ձգտեմ կեանքիս ընթացքում—
Դէպի մնայուն, յաւիտենականն...
Հաճոյք ու գգուանք, սիրոյ Հեշտութիւն—
Տեսում է միայն ուղիղ մի վայրկեան:

1898 սեպտ. 14.

5-5 4 abab



X Կ Ե Ա Ն Ք X

Կեանքը—ալէժուի ուկեան է անեղր,
Իսկ մարդիկն այնտեղ—լուզորդներ իբրև
Եւ երբ մի կոհակն բարձրացնում է մեզ,—
Յաջորդն իսկոյն գլորում է ներքև...

1898 սեպտ. 10. 5-5, 4, abab

Եր. Եստուրա աստուտո՛ւ, ուրախ - սուս



պարբերակ

Դ Ռ Ն Ե Ր Ի Ա Ռ Ա Չ

(Թիւկերտից)

Բախում էի ես դուռն Հարսուբեան—
Հուսամուտից ինձ ձգեցին մի դրամ:

Սիրոյ տան առաջ շատ մարդ կար խմբուած՝
Եւ իղուր երկւոր մնացի ես կանգնած:

Բախեցի դուռն Փառքի ամրոցին—
Ասին հեռուակ ես, դուռն չբացին:

Աւխասուբեան տուն վախեցայ մոնել,—
Հառաչանքների լսեցի ձայներ:

Բախի ետեկի շրջեցի աշխարհ,
Չ'ասաց ինձ ոչ ոք նրա տան ճանապարհ:

Այժմ ինձ համար մի դուռն մնաց միայն
Ու վերջին անգամ ես կը բախեմ այն.

Թէև Շիրմի մէջ շատ մարդ կայ թաղուած՝
Ինձ համար անշուշտ տեղ կ'լինի մնացած...

5-5 ② 14 c.



պարտեզ

Ն Ա Դ Ս Օ Ն Ի Յ

I.

Չասէք՝ թէ մեռաւ—ողջ է տակաւին.
Քանդուած զոհարանն—առկայծում է դեռ.
Փրցցրած վարդն—բուրում է կրկին.
Զախջախուած քնարն—հանում հառաչներ...

5-5, 4, alab



II. ?

Մ Ո Ի Ս Ա Յ Ի Ս

Հեռնը ճակատից սարդենու պսակ
Պոկիր ու ձգիր նորան ոտքի տակ.
Տատասկն արնաթոր, տատասկն կոպիտ—
Յարմար է միայն վշտակիր դէմքիդ...

5-5, 4, c.




„Հ Ա Մ Լ Է Տ Ի Յ“

(Նուէր օր. Ս-ին.)

Եղի՛ր մաքուր—ինչպէս սառոյց
Եւ անարատ—որպէս ձիւն,
Մարդիկ դարձեալ կանեն զրոյց,
Կը մըրրօտեն քո անուն...

1898 մայիս 10



Հ Ա Յ Ն Է-ից

I.

Մանկիկ, դարնան դու ծաղկի պէս,
Մաքուր, քնքուշ ես Լ'ամբի՛ծ.
Բայց ուր էլ որ տեսնում եմ քեզ—
Սիրոս պատում է թախի՛ծ:

Ես կ'ուզէի աղօթելով
Դնել ձեռքս քո գլխին,
Որ պահպանէ Աստուած յաւէտ
Այդպէս անբի՛ծ քո հոգին:



II.

Թ՛նդ երկնքից ձիւնն թափուի,
 Քամին սուչէ, փոթորկի,
 Թ՛նդ պատուհանս բախէ՝
 Որքան կուղէ՝ ինձ փոյթ չէ.

Սիրոյս մօտն ինձ համար—
 Կարծես թէ լինի ամառ...



III.

Որպէս լուսինն դողդոջաբով
 Արտայայտում է պէտայ մէջ,
 Մինչ ինքն հանգիստ ու անվրդով
 Սահում երկնքում անվերջ.

Այդպէս էլ դ՛ն հանգիստ, խաղաղ,
 Ինչպէս լուսինն՝ առաջ դնում,
 Իսկ քո դէմքդ պայծառ, ուրախ—
 Արտափայլում է իմ սրտում:



Բ Ա Ղ Չ Ա Ն Ք

(Ազատ Թարգմանութիւն).

Ա՛խ, մի լընցրէք դուք ինձ դերեղման
վաղ արշալուսին խնկաբոյր գարնան,
Իսկ եթէ թաղել դուք ինձ կամենաք՝
Լաւ է, որ դնէք կանաչ ծառի տակ:

Ես կը ցանկայի պառկել ծաղկանց մէջ
Ու լսել առուի համերգն անվերջ,
Դիտել լողացող եթերում՝ անհուն
Մայիսեան սիրուն ամպերը փայլուն.

1898 մայիս 2.

5-5 (4) 8 c.




ՍՈՒՍ ՉԱՅՆԵՐ ՉԵՆ...

Սուքա ձայներ չեն սիրազեղ սրտի,
Այլ թոյլ հեկեկանք փշուռած քնարի...
Մի խնդրիր ինձնից դու մի ուրախ երգ,
Ինչպէս աղբիւրի քաղցրանուագ օրհներգ,
Որպէս սոխակի անոյշ դայլայլիկ,
Ինչպէս զեփուռի համերգն քաղցրիկ.
Սիրտս վաղճւց է դարձել աւերակ,
Չես կարող դու տալ նորան մի նոր կեանք:

1897 նոյեմբ. 4.

5-5, 8, c.



Վ Ա Ղ Ա Ն Յ Ո Ի Կ

Տեսել էք արդեօք երբ արշարուին
 Փրթթում է գողարիկ ծաղիկն սիրուն
 Եւ երբ մըթնշողն իջնում է գետին
 Թռռմում են նորա թերթերը վայրուն.

Այդպէս էլ ահն, մեր կեանքն է աւաղ,
 Ծաղկում մի վայրկեան և ապա թռռում,
 Ինչպէս վաղանցուկ ծաղիկն չքնաղ՝
 Թօշնում է շուտով ու անյայտանում...

1899 յունուար 3.

5-5 ④ 8 alab



Մ Ի Ե Ի Ն Ո Յ Ն Է

Կեանքը իրաւամբ է մի ուրիշան,
 Ուր որ կատաղի իշխում են հողմեր,
 Նրանք սպառնում են ամեն մի վայրկեան
 Մեզ գէպ անյատակ անդունդը նետել:

Սակայն լուրորդն գիմում է անահ՝
 Այլքների գէմ կռուելով անվերջ.
 Միևնոյն է թէ՛ ուր կը հանգչի նա—
 Խաղաղ ծովափնում, թ'այլքների՞ մէջ...

1899 մարտ 22.

5-5 ④ 8 alab



ՅՈՒՍԱԽԱՅՈՒԹԻՒՆ

Դեռ նոր էր փրթթում կեանքիս արշարոյս,
 Երբ բեր հրապուրիչ ոսկի անուրջներ՝
 Շրջնջում էին եռանդ ու խրախոյս,
 Ջրնաղ ապաղայ, անթառամ յոյսեր...

Խոստանում էին ինձ օր փառաւոր,
 Շողջողուն երկինք անամպ ու պայծառ,
 Իսկ երեկոյեան խաղաղ և անդորր—
 Կապուտակ կամար, ասողեր անհամար...

Սրտիս ցնձագին, ուժգին բախումից
 Թնդում էր կուրծքս, բարձրանում ուրախ,
 Ինձ չէր վրդովում կասկած ու կսկիծ,
 Ես ապրում էի անհոգ ու խաղաղ:

Անցաւ արշարոյսս... ան, երբէք, երբէք
 Կրկին չի դառնալ... ծագեց արեգակ.
 Յրուեցան իսկոյն մարախուղ ու մէգ,
 Գողտրիկ անուրջներս չքացան համակ:

Ու մէկիկ մէկիկ իրար ետեւից
 Ոսկեվառ յոյսերս անհետացան, ✓ այ.
 Եռանդս մարեց... ու միայն թախիծ
 Մնաց ինձ բաժին մինչև գերեզման.

Եւ տըխուր-տըրտում, կասկածն սրտիս,
 Դեռ չը ճաշակած կեանքի քաղցրութիւն,
 Թախծութեան ամպն ահա ճակատիս՝
 Սլանում են օրերս գէպ անհունութիւն...

1899 մարտի 1.

5-5 ④ 24 abal




ՊԻՏ ՀՆԱԶԱՆԴՈՒԵՆԻՓ

Ինչպէս ահռելի փոթորկի առաջ
Մնզօր ենք կանգնել ու է պատուար,
Երբ նորա ախուր ու լալահառայ
Ուժգին գոչիւնից զողում է աշխարհ.

Ինչպէս չէ կարող սչ ոք արգելել
Սաստիկ հեղեղի ընթացքն փրփրած,
Երբոր դարձնելով իւր շուրջն աւեր
Սլանում է վայրագ նա լեռներից յած.

Այդպէս էլ ահն անկարող ենք մենք
Փոխել օրէնքներն յաւիտենական,
Թէև ակամայ—պիտ հնազանդուենք՝
Մինչ կեանքի վախճան, մինչև դերեզման...

1898 սեպտ. 16.




ԿԵԱՆՔԻ ՈՎԿԵԱՆՈՒՄ

Իբրև ենթակայ ընութեան անյեղլի
Մենք օրէնքներին՝
Մղւում ենք առաջ անդիմադրելի
Ուժով անընթին:

Լողում ենք, լողում մենք ովկիանում
Կեանքի անսահման,
Փանի որ ունենք մեր բազուկներում
Մենք ոյժ մաքառման:

Բայց երբ վաստակած մենք այդ կռուի մէջ
Ընկնում ենք յաղթուած՝
Կլանում է իսկոյն յորձանքը անվեր՝
Կեանքի փրփրած...

1898 սեպտ. 10.



Ա Ր Յ ՈՒ Ն Ք

Քիչեր էր խաղաղ. անմեկին թախիծ
 ձնչում էր կուրծքը անհուն երկնքի
 Եւ նորա գողտրիկ, պայծառ աչերից
 Գլորւում էին վայր արցունքներ օսկի,

Լուռ էր պօէան... անհամար յոյզեր
 Փրփրում էին նորա կրծքի մէջ
 Եւ բիւր բոցավառ աղի արցունքներ
 Գուրս էին ցայտում աչերից անվերջ...

1899 մայիս 9.



ԱՄՊ ԵՒ ՎԻՇՏ

Ինչպէս երբեմն ամպն թանձրանա՞ծ
 Գալիս, սքողում է կապոյտ կամար
 Եւ այնուհետեւ մեր շուրջն յանկարծ
 Դառնում մթազոյն, դժգոյն ու խաւար.

Այդպէս էլ վիշտն—ամպն թախձալից,
 Գալիս է երբեմն մեր հոգին պատում
 Եւ այն ժամանակ մեզ նորա միջից
 Ամենայն մի բան խաւար է թւում...

1901 ապրիլ 30.



Ե Ր Գ Չ Ի Ն

Թէկուզ շանթարձակ եթերից անկզ
 Որոտան ուժգին, սիւսիւր կայծակներ,
 Թ'աշխարհակործան տարափ ու հեղեղ
 Թ'ափիւր դու անդուլ, վարարիւր գետեր.

Ուժգին փոթորկիւր
 Փրփրիւր ու յուզուիւր,
 Կամ կարկուտ տեղան
 Դու երկրի վրայ՝

Դարձեալ կասեմ քեզ՝ զնոր են քո ջանքեր...
 Մարդիկ չեն դառնալ, չեն լսիլ քո ձայն,
 Նոցա լսելին կարող է գրաւել—
 Ժանդոտ մետաղի զընդոցն միայն...

1900 յունիս 13.



ԱԶՆԻԻ ԳՈՐԾՉԻՆ

Փնուքն—ունայնութիւն, պատիւն—է փոքրիկ
 Մարդերի յարգանք.

Իսկ տիտաններն ընաւ չունեն կարիք
 Լսել խրախուսանք.

Դափնով զարգարել ամբոխն գիտէ
 Քարէ կուռքերին.

Թո՛ղ քո ճակատին երբէք չփայլէ
 Ունայն մըրտենին.

Թո՛ղ չը հրապուրեն քեզ—ծնով, աղաղակ,
 Գովեստներ անհուն...

Ի՞նչ հարկաւոր է, մարդիկ խայտառակ,
 Թէ տան քո անուն.

Թո՛ղ քո վեհ-ազնիւ գործերդ միայն
 Լինեն քեզ խրախոյս.

Թէկուզ մոռացուիս, մարդկանցից համայն՝
 Յառաջ լիայոյս...

1901 յուլիս 9.



Մ Ա Ն Կ Ա Ն

48

- Մինչ օրրանիդ մէջ անվրդով
- ✓ Հանդչում ես անհոգ-ուրախ
- Ու վարդագոյն շրթունքներով
- ✓ Ժպտում ես ինձի յաճախ—

Ես տխրում եմ... գիտեմ, աւանդ,
 Շատ չի տևի այդ բերկրանք,
 Կանցնի ժպիտ, կանցնի ծիծաղ,
 Երբ կ'իմանաս դու տանջանք...

Երբ կը տեսնես դու խայտառակ
 Մարդկանց ստոր արարմունք՝
 Կ'փայլի դէմքիդ այն ժամանակ՝
 Ո՛չ թէ ժպիտ—այլ արցունք...

1898 յունիս 12.

8/7 4-4/(4-3)



(4) 12 abab

ԿԵԱՆՔ ԵՒ ՎՏԱԿ

Ինչպէս վրտակն խայտալով
 Ուրախ-անհոգ ու կայտառ,
 Թաւալում է կարկաչելով
 Իւր արկներն պայծառ.

Այդպէս օրերն էլ մանկութեան,
 Անգին հասակն չքնաղ,
 Սահում է դիրկն անհունութեան
 Դէմքին ժպիտ ու ծիծաղ:

- Բայց անցնում է այդ դեղ հասակ.
- Վասնին փոխում է դետի,
- Ալիներն—դառնում կոհակ
- ✓ Հանում հառաչներ վշախ.

Եւ մանկութեան օրերն վճիտ
 Անհետանում են անդարձ.
 Անցնում ծիծաղ, կորչում ժպիտ,
 Պատում թախիծ անթափանց...

1901 օգոստ. 24.

8/7 4-4/(4-3) (4) 16 abab



ԱՆՅՆՈՒՄ ԵՆ, ԳՆՈՒՄ...

Ինչպէս հեռացող նաւի վերայից
Պանդուխտ ուղևորն տխուր, թախծալից
Նայում է հեռճւղ ու լուռ արտասուում,
Երբ հայրենիքի լեռները սիրուն
Ալիքների մէջ ծովի փրփրըրուն
Սուղւում են մեղմիկ ու անհետանում...

Այդպէս էլ և ես՝ արցունքն աչքիս,
Տեսնում եմ ինչպէս օրերն կեանքիս
Անցնում են, գնում, սլանում են աւաղ,
Տանում իրանց հետ նոքա կամացուկ՝
Թէ ուրախութիւն, թէ՛ ժպիտ, թ՛արցունք—
Յաւիտենական գրկի մէջ խաղալ...

1898 սեպտ. 16.

5-5 ⑥ 12 aabcc



„ՆՈՐ ԳԱՐՈՒՆ“

(1899 թ.)

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք



Սննման գարուն! 5

Օ, քանի անհուն— 5

Ոսկեվառ յոյսեր,

Քաղցրիկ անուրջներ

Շրջնջում ես ինձ...

Սիրտս թախծալից

Սկսում է կրկին

Բարախել ու ժգին

Նոր կեանքի համար

Եւ ես յուսավառ

Ուզում եմ ապրել,

Ապրել ու սիրել...

Մարտի 11.

5, 12 c.



Ն Ո Ր Գ Ս Ր Ո Ւ Ն

I.

Տես, ահա՛ ծաղկում, փրթթում են կրկին՝
 Վարդ և մանուշակ, շուշան ու մեխակ
 Եւ գերերկրային սիրոյ մեղեդին
 Նուագում է անխոնջ սիրավառ սոխակ.

Իմ սիրաս էլ ահա՛ փրթթում է նորից,
 Բացում է, բուրում՝ գերթ ծաղիկ սիրուն—
 Նա երազում է, հոգեակ իմ անբիծ,
 Անթառամ սիրոյ մի չքնաղ գարուն...



II.

Քարունն զարդարել է ողջ բնութիւնն
 Երփնէրանդ ծաղկանց փնջերով սիրուն
 Ու նոյա բուրմունքն քաղցր և անոյշ,
 Ազգում՝ են սրտիս լարերին քնքոյշ:

Տես, զմրուխտագեղ խոտերի միջից
 Ժպտում է ինձի շուշանն անբիծ,
 Իսկ կապուտաչեայ մանուշակն չքնաղ
 Յուզում է, աւանդ, իմ սիրտս խաղաղ...


Նա յիշեցնում է, մանկիկ, քո աչեր
 Սրբազան սիրոյ անշէջ կանթեղներ,
 Թէեւ կապուտակ՝ ինչպէս մանուշակ,
 Սակայն աւելի գողտրիկ է՝ անուշակ...



III.

Օ առերն ահա կանաչ հաղած
 Ողջունում են ինձ, ժպտում
 Ու ալանջիս նորա կամաց
 Ոսկի յոյսեր շքնջում:

Եւ ես կրկին ուրախ-անհոգ
 Ապրել, տանջուել եմ ուզում,
 Միայն հուրն սիրաբորբոք
 Մնար անշէջ իմ սրտում...



IV.

Մանուկ էի ես սիրավառ
Աստղ ու ծաղիկ սիրեցի,
Նոցա համար ես անհամար
Գողարիկ տաղեր երգեցի:

Երբ մեծացայ, առայ հասակ՝
Տեսայ զուր են իմ ջանքերն,—
Ծաղկունք թումում էին համակ,
Հեռու էին վառ աստղերն:

Բայց երբ, յանկարծ, ես քեզ տեսայ
Քեզ, իմ հրեշտակ, հրաշազան,
Աստղն ու ծաղիկն մտացայ,
Քեզ եմ երգում ամեն ժամ:



V.

Ինչպէս մոգերն արեւըրում
Տեսան աստղ մի նորածին
Ու նորանով անշուք այրում
Գտան մանուկ Յիսուսին:

Այդպէս էլ ես, երբոր տեսայ
Չնաշխարհիկ քո աչեր,
Իսկոյն, սիրելիս, հասկացայ,
Որ դ՛ու պիտ լինիս իմ սէր...



VI.

Ի՞նչն է ծաղկին բուրբի տալիս,
 Առուին—խոխո՞ղ, թռչնին—երգ,
 Ի՞նչ է ծառին պտճուղ տալիս,
 Իսկ իմ սրտին—տանջող վէրք...

Հոգե՞սկ, դորա անունն է «սէր»,
 Որ սիրտս լափում է համայն,
 Բայց թէ նա ինձ չը հրդեհէր՝
 Չէի ապրիլ ես մի վայրկեան...



VII.

Ինչպէս սոխակն սիրազեղ
 Նստած վարդի թփի մօտ
 Իւր մեղեդին չքնադազեղ
 Հնչեցնում է յառաւօտ

Եւ արշալուսին բոցավառ՝
 Նորաբողբոջ կոկոնում
 Գտնում է նա անոյշ նեկտար՝
 Սիրոյ ծարաւն յագեցնում,

Այդպէս էլ ես, քեզ իմ վարդին,
 Երգեցի բուր սիրոյ երգ,
 Բայց դու, հոգիս, ամենևին
 Ծարաւս չյագեցրիր երբէք...



VIII.

Ահն թիթեռն անդադար
 Ծաղկից ծաղիկ է թռչում,
 Միենոյն է նորա համար՝
 Թէ վնորդ, մեխանկ, թէ քրքում:

Բայց տես սոխակն սիրավառ
 Երգում է միայն վարդին
 Ու ողջ գիշերն խանդավառ,
 Հանգչում է նորա գրկին:

Ես էլ հոգիս, ինչպէս սոխակ,
 Միշտ քեզ համար եմ երգում,
 Թիթեռն ինձի չէ օրինակ՝
 Թնոյ, որ հանգչեմ քո գրկում...




IX.

Վաղուց է, որ չեմ աղօթում
 Այլ ես ես սրբերին,
 Որովհետեւ դճւ իմ սրտում
 Թագաւորում ես անգին:

Քեզ եմ աղօթում ես հոգիս՝
 Վերջալուսին, վաղորդեան.
 Քեզ եմ յայտնում դադանին սրտիս,
 Դու ես յոյսս փրկութեան...

Սակայն նման այլ սրբերին
 Դու էլ չես լսում բընաւ
 Եւ իմ տանջուած, իմ հէզ սրտին
 Պատճառում ես անբոյժ ցաւ...



X.

Ինչի՞ք են պէտք ծաղկունքն ասն,
Թուումս՞ են շուտ, չունին հոտ,
Մինչ քո չքնաղ կրճ.քի՞ք վրայ
Ունիս եղեմ՝ խնկահոտ.

Ինչի՞ք են պէտք, ասն հոգիս,
Վե՞զ աստղերն ոսկեվառ,
Դէմքի՞ք վերայ ահա ունիս
Մի զոյգ աստղիկ բոցավառ.

Օ՛, եկ հոգիս, գրկեմ ամուր
Շնչեմ բոյրն քո կրճ.քի՞ք
Ու սիրավառ քաղցրիկ համբոյր
Դրոշմեմ գոգտրիկ աչերի՞ք:



XI.

Տես, սիրելիս, ահա կրկին
Արժանացանք մենք զարնան,
Թռչունք երգում են խմբովին,
Ծաղկունք բուրում աննման.

Մենք էլ, հոգիս, դարձեալ անվերջ
Իրար գրկում ենք, փարում—
Սիրոյ կրակն մեր սրտի մէջ՝
Բորբոքում է, հրգեհում:

Բայց այս գարունն էլ շուտ կանցնի,
Կ'թուամին ծաղկունքն համայն,
Միայն սիրոյ հուրն չի մարի
Մեր սրտերում յաւիտեան...



XII.

Քաղտագողի քաղցրիկ համբոյր
 Երբոր տուիր այն գիշերն
 Ու սեղմեցիր կրծքիդ ամուր՝
 Նոր հասկացայ ի՞նչ է սէրն:

Նոր հասկացայ, չքնաղ մանկիկ,
 Թէ ի՞նչ ասել է սիրել,
 Ի՞նչ ասել է՝ շրթիդ քնքշիկ—
 Շուրթս սեղմել, համբուրել...

Օ, սիրելիս, կը ցանկայի
 Անվերջ լինէր այդ հեշտանք,
 Որ քո գրկում մոռանայի—
 Եւ իմ վշտերս, և տանջանք...



XIII.

Ես կը ցանկայի արշարուսի վառ
 Լինել նշոյլներ,
 Որ քեզ փարէի՝ սիրով խանդավառ,
 Տայի համբոյրներ:

Ես կը ցանկայի լինել փայլիւտն
 Առկայծող աստղիկ՝
 Քեզ համար միայն հոգեակ սիրասուն
 Շողայի մեղմիկ:

Օ, կը ցանկայի ես լինել զեփիւռ
 Մազերդ շոյել,
 Կամ սիրահառաչ խոխոջող աղբիւր
 Երեսդ թրջել:

Կուղէի լինել ես՝ դոհար արցունք
 Փայլել աչերիդ,
 Կամ չնաշխարհիկ մի անոյշ բուրմունք
 Թառել շրթունքիդ.

Ես կը ցանկայի տիեզերքն բոլոր
 Ունենալ իմ մէջ,
 Որ կարենայի ես ամենայն օր
 Քեզ գգուել անվերջ...

Բայց թէ լինէի... գիտես ի՞նչ, հոգեակ,—
 Երկրագնդիս տէր...
 Հաւատայ օր ես քեզ հետ միայնակ
 Կուղէի ապրել...




XIV.

Պու հարցնում ես... երբ մենք իրար
 Համբուրում ենք շերմաղին,
 Արդեօք ինչո՞ւ, ինչի համար
 Եմ ես զոյգում այդ ժամին...

Արդեօք ինչո՞ւ, երբ բոցավառ,
 Իրար զրկում ենք ամուր,
 Դարձեալ, հոգիս, ի՞նչն է պատճառ,
 Որ մենք զգում ենք սառսուռ...

Աւանգ, չգիտես, սիրելիս.
 Բայց չես հասկանալ անդամ...
 Օ՛հ, եկ, սեղմեմ այրուօղ կրճ.բիս՝—
 Համբուրեմ քեզ, զովանամ...



XV.

Մի լար, հողիս, բնաւ մի լար,
 Որ թումեցան վարդ, մեխակ՝
 Սրտիս միջին դեռ քեզ համար
 Նոքա փթթում են համակ.

Սիրտս էլ ունի բիւր անհամար
 Անուշաբոյր ծաղիկներ,
 Սեղմիր կրծքիդ ինձ սիրավառ՝
 Նրանց կը տամ քեզ նուէր.

Եւ երբ այսպէս գրկած իրար
 Կ'հանդչենք խաղաղ, երջանիկ՝
 Ես կը ծծեմ սիրոյդ նեկտարն,
 Իսկ դու հիւսիք վառ վնջիկ...



XVI.

Ինչպէս, որ վաղ արշալուսին
 Արփուոյն շողերն սսկեվառ
 Կլանում են վարդի շրթին
 Փայտոյ ցօղերն գոհար.

Այդպէս էլ ես, երբ սիրելիս,
 Թշիւդ արցունք եմ տեսնում,
 Սեղմում եմ քեզ այրուող կրծքիս,
 Նոցա շուրթովս մաքրում...



XVII.

Օ, սիրելիս, գրկեր ամուր,
 Սեղմիր կրծքիդ սիրալառ,
 Սրտիս մեջի անմեկին հուրն
 Ա՛խ, չէ տալիս ինձ դադար:

Դու լալիս ես... լացիք հոգիս,
 Արցունքներովդ անվերջ՝
 Դէհ, շնատ, մարիք հուրը սրտիս,
 Որ այրում է ինձ անշեջ...



XVIII.

Քեզ պիտի սիրեմ՝ երբ արշալուսին
 Զեփիւռը մեղմիկ մրմնջէ օրօր.
 Քեզ պիտի սիրեմ՝ երբ վերջալուսին
 Մազէ երկնքում աստղն լուսաւոր.

Քեզ պիտի սիրեմ՝ երբ սիրատարփիկ
 Երկինքն թափէ գոհար արցունքներ,
 Երբ գգուեն միմեանց աստղիկն ու ծաղիկ,
 Երբօր սոխակի հնչեն նուագներ.

Քեզ պիտի սիրեմ անվերջ, անդադար...
 Եւ ողջ տիեզերքն թէ աւեր դառնայ,
 Հաւատան, հոգիս, սիրտս բոցավառ
 Փլատակներից էլ քեզ պիտի տենչայ:



XIX.

Գիշեր էր: Երկինքն սիրով համակուած
 թափում էր դոհար, փայլուն արցունքներ,
 վարդի թփի մօտ սոխակն նստած
 Հանում էր անդուլ սիրոյ հառաչներ.

Գիշեր էր... Ես էլ ընկած քո առաջ՝
 վառւում էի քո սիրովդ անշէջ
 Եւ աղի արցունք և դառն հառաչ
 Դուրս էին թռչում կրճ.քիցս անվերջ...



XX.

Լուռ էր մեր շուրջն: Լուսինը մեղմիկ
 Սահում էր անդորր եթերում անվերջ,
 Լուիկ հանգչում էր ոսկեղօծ ալիք,
 Նիրհում էր սոխակն թփերի մէջ:

Լուռ էր մեր շուրջն: Ձեփիւռը քնքոյշ
 Տայիս էր համբոյր վառ ծաղիկներին,
 Բուրում էր վարդն քաղցր և անոյշ,
 Ձեփիւռը բուրմունքն ծաւալում հեռին:

Լուռ էր մեր շուրջն: Ես էլ, սիրելիս,
 Նայում էի լուռ աչերիդ պայծառ,
 Լուռ յայտնում էի տանջանքը սրտիս...
 Բայց իմ հայեացքս դու չը հասկացար...



XXI.

Քեզ էի սպասում... Արևի գողարիկ
 Շողերն մարում էին հեռում,
 Դեռ չէր վայրկում և ոչ մի ասաղիկ,
 Խորին լուսթիւն էր շուրջս տիրում:

Մեզմիկ վշշալով սահում էր գետակ
 Ու շշնջում էր տխրազին անցքեր,
 Հեռճեն, թփերում երգում էր սոխակ...
 Բայց չէր գրաւում նորա նուագներ:

Անհուն թախծութեամբ նայում էի ես,
 Քեզ էի սպասում արխուր վշտահար ..
 Բայց դ՛ն խոստումդ մոռացար կարծես
 Եւ ինձ անտութեան, սիրելիս, չեկար...



XXII.

Ինչպէս ծաղիկներն փրթթում են, ծաղկում
 Եւ ապա թուամում, թափւում են գետին,
 Այդպէս էլ ահա մեր կեանքն է անցնում,
 Մենք էլ մեռնում ենք ու լիջնում շիրխ:

Բայց բնութիւնն իբրև գթոտ մայր
 Սգում է մահն իւր զաւակների,
 Անհուն թախծութեամբ գլորում է վայր
 Գոհար կաթիլներ ջինջ արցունքների:

Իսկ դ՛ն, սիրելիս, արդեօք պիտ խղճանս
 Երբոր իջեցնեն ինձ ցուրտ գերեզման...
 Եւ ասան, հոգիս, ասան պիտի լնս—
 Երբոր ծաղիկներ բուսնեն ինձ վերան...



XXIII.

Երբոր ես մեռնեմ... լոկ դիակ դառնամ
Մարմինս պատէ հողակոյտ, դամբան՝
Ասն, սիրելինս, ասն պիտ սգանս,
Արդեօք շիրիմիս վերան պիտի լնս.

Երբոր բոլորեն ամիսներ, տարիք...
Ու հէզ պոէտիս մոռանան մարդիկ,
Օ՛, անգին մանկիկ, դու էլ չե՞ս յիշիլ
Եւ աղի արցունք արդեօք չե՞ս թափիլ.

Ինձ չեն վրդովում որթերն շիրմի
Եւ ոչ յիշատակս, որ շուտ պիտ թողմի...
Բայց մեռնել—քեզնից մոռացուել, հողեանկ,
Ահն իմ վիշտս, իմ ցաւս միակ...



XXIV.

Դալուկ շուշան, դեղնած յասմիկ,
Թոռմած-թօշնած մանուշակ,
Շէկ մազերիցդ մի փնջիկ՝
Ահն նուէրներդ համակ:

Ես նայում եմ տխուր-տրտում
Անցեալի այդ յուշերին,
Սիրոյ կրակն հրդեհում,
Բորբոքում է ինձ կրկին...

Եւ արցունքի ջինջ կաթիլներն
Գլորում են ահա ցած,
Երբոր յիշում եմ օրերն,
Չքնաղ օրերն անցած...



ՆԿԱՏՈՒԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես	Տող	սխալ	ուղիղ
3	3	Icoler	Ieder
"	5	die heben	das Leben
"	6	Dichlkunst	Dichtkunst
28	4	պատել	պատէր
55	3	մնայուն	մնայունն
57	3	բախում	բաղխում
"	7	բախեցի	բաղխեցի
"	14	բախեմ	բաղխեմ

Իսկ եթէ պատահեն այլ սխալներ՝ խնդրում եմ
ընթերցողները ուղղեն:



9692

2013